ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 4 անդամներ:

Բացակա էր՝ Ալեքսանդր Բլոխինովը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ալեքսեյ Չիչյովը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արարատ Աբրահամյանը

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, ավագանին որոշում է

Հաստատել Ֆիոլետովո համայնքի դեկտեմբերի 01-ի արտահերթ նիստի օրակարգը

Օրակարգ

1. Ֆիոլետովո համայնքի 2023թվականի դեկտեմբերի 01-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Ֆիոլետովո համայնքի 2022 թ.-ի դեկտեմբերի 27-ի «Ֆիոլետովո համայնքի 2023 թ.-ի բյուջեն հաստատելու մասին» թիվ 31 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

3. Ֆիոլետովոյի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

4. Ֆիոլետովո համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գինը, աճուրդի պայմանները հաստատելու մասին

5. Ֆիոլետովո համայնքի համայնքապետարանի և գրադարանի 2023 թ.-ի գույքագրման արդյունքները հաստատելու մասին

6. Ֆիոլետովո համայնքի բնակիչներին սոց.օգնություն տրամադրելու մասին

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի «ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ.-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 31 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱԼԵՆՏԻՆԱ ՆՈՎԻԿՈՎԱ/

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

Կատարել փոփոխություն Ֆիոլետովո համայնքի 2022թ.-ի դեկտեմբերի 27-ի «Ֆիոլետովո համայնքի 2023 թ.-ի բյուջեն հաստատելու մասին» թիվ 31 որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ն/

Լսեցին

ՖԻՈԼԵՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ, 28-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և 37-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Ֆիոլետովոյի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի.

2. Ուժը կորցրած ճանաչել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Ֆիոլետովոյի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 35 որոշումը

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից.

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Լսեցին

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ, ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Տալ համաձայնություն Ֆիոլետովո համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելուն,մեկնարկային գինը և աճուրդի պայմանները հաստատելու մասին: 2. Աճուրդ-վաճառքով օտարվում է հողատեսք 1 լոտով.

-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0020-0029 ծածկագրով 0,00798 հա հասարակական կառուցապատման հողատեսք: Մեկնարկային գինը սահմանել 63000 / վաթսուներեք հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2023Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ֆիոլետովո համայնքի համայնքապետարանի և գրադարանի 2023թ. գույքագրման արդյունքները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍՈՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱԼԵՆՏԻՆԱ ՆՈՎԻԿՈՎԱ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին.

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից.

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

Ավագանու անդամներ

ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ

ՄԻԽԱԻԼ ՉԻՉՅՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

ՄԻԽԱԻԼ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

Համայնքի ղեկավար

ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ_____

Նիստն արձանագրեց՝ Արարատ Աբրահամյանը

_____